Հավելված N1
Հայաստանի Հանրապետության
պետական եկամուտների կոմիտեի նախագահի
2020 թվականի ապրիլի 17-ի
N 337-Ն հրամանի

Ձև

ՀԻՄՆԱԴՐԱՄՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ՀՐԱՊԱՐԱԿՎՈՂ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ
ՀԱՍՏԱՏՎԱԾ Է
Հիմնադրամի հոգաբարձուների
խորհրդի 01-02-2024 թ. որոշմամբ
«ԻՆՈՎԱՑԻՈՆ ԿԵՆՏՐՈՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ»
Հ Ա Շ Վ Ե Տ Վ ՈՒ Թ Յ ՈՒ Ն
հիմնադրամի 2023 թ. գործունեության մասին

1. Հիմնադրամի՝		
1.1 Լրիվ անվանումը		ԻՆՈՎԱՑԻՈՆ ԿԵՆՏՐՈՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ
1.2 Գտնվելու վայրը		ԵՐԵՎԱՆ ՆՈՐՔ-ՄԱՐԱՇ ՆՈՐՔ-ՄԱՐԱՇ ԹԱՂԱՄԱՍ ՏԵՐՅԱՆ 105 10-ՐԴ 6-ՐԴ ՀԱՐԿ
1.3 Պետական գրանցման համարը		222.160.60972
1.4 Պետական գրանցման տարին, ամիսը, ամսաթիվը		2012-01-23
1.5 ՀՎՀՀ-ն		00110858
1.6 Հեռախոսը (այդ թվում՝ բջջային)		+(374)10545343
		+(374)77218015
1.7 Պաշտոնական ինտերնետային կայքը		https://www.mic.am/
1.8 Էլեկտրոնային փոստը		mic@mic.am
2. Հիմնադրի անուն, ազգանուն կամ անվանում՝		
3. Հոգաբարձուների խորհրդի անդամների անուն, ազգանուն՝		
Ժենյա Ազիզյան		
Հայկ Ֆարմազյան		
Մանուկ Հերգնյան		
Արամ Սալաթյան		
4. Կառավարչի անուն, ազգանուն՝		
Արմեն Բալդրյան		
5. Աշխատակազմում ընդգրկված անձանց քանակը	6	
6. Անձեռնմխելի կապիտալի չափը		
7. Անձեռնմխելի կապիտալի կառավարումից ստացված եկամուտ		
8. Ֆինանսավորման աղբյուրները՝		
8.1 Ֆինանսավորումն ըստ խմբերի	8.2 Ստացված ֆինանսական միջոցների նպատակը	8.3 Չափը
8.1.1 Պետական և համայնքային բյուջեներից դրամական մուտքեր		
8.1.2 Իրավաբանական անձանցից դրամական մուտքեր		
8.1.3 Ֆիզիկական անձանցից դրամական մուտքեր		

Digitally signed by NIKOGHOSYAN DAVIT 1608850234
Date: 2024.06.28 17:38:03 AMT

9. Հիմնադրի ներդրումը՝		
9.1 Դրամական միջոցներ		
9.2 Գույք	9.2.1 Տեսակը	9.2.2 Արժեքը
10. Նվիրատվությունները/ նվիրաբերությունները		
10.1 Նվիրատուները/նվիրաբերողներն ըստ խմբերի՝	10.2 Նվիրված/նվիրաբերված գույք	
	10.2.1 Տեսակը	10.2.2 Արժեքը
10.1.1 Հայաստանի Հանրապետություն/համայնքներ		
10.1.2 Իրավաբանական անձինք		
10.1.3 Ֆիզիկական անձինք		
11. Իրականացված ծրագրերը՝		
11.1 Ծրագրի անվանումը	11.2 Ծախսված գումարը	
12. Ֆինանսական տարում օգտագործված միջոցների ընդհանուր չափը	50,608,197	
13. Կանոնադրական նպատակների իրականացմանն ուղղված ծախսերի չափը		

Նշումներ՝

Ֆինանսական հաշվետվություններն ու ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ աուդիտն իրականացնող անձի (աուդիտորի) եզրակացությունը՝ 21 էջերից:
էջերի քանակը

Հիմնադրամի տնօրեն _____
ստորագրությունը, անունը, ազգանունը

Գլխավոր հաշվապահ _____
ստորագրությունը, անունը, ազգանունը

Ֆինանսական հաշվետվություններ
Անկախ աուդիտորական եզրակացություն

2023թ դեկտեմբերի 31-ի դրությամբ

«Ինովացիոն կենտրոն» հիմնադրամ

Երևան – 2024

«Ինովացիոն կենտրոն»
հիմնադրամ

Հայաստանի Հանրապետություն

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԲԱԺԻՆ	Էջ
Անկախ աուդիտորական եզրակացություն	3
Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն	6
Համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվություն	7
Զուտ ակտիվների փոփոխությունների մասին հաշվետվություն	8
Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվություն	9
Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ	10

«Ջի ընդ Քո Աուդիտ Գրուպ» ՍՊԸ
ՀՀ, ք. Երևան 0038, Հալաբյան 5/6
5/6 Halabyan str., Yerevan 0038, RA
Հեռ/Tel: (+374 10) 399 855, (+374 55) 560 550

ԱՆԿԱԽ ԱՈՒԴԻՏՈՐԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

«Ինովացիոն կենտրոն»
հիմնադրամի հոգաբարձուների խորհրդին

Կարծիք

Մենք աուդիտի ենք ենթարկել «Ինովացիոն կենտրոն» հիմնադրամի (այսուհետ՝ «Հիմնադրամ») ֆինանսական հաշվետվությունները, որոնք ներառում են ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունը՝ առ 31 դեկտեմբերի 2023թ., ինչպես նաև այդ ամսաթվին ավարտված տարվա համապարփակ ֆինանսական արդյունքի, զուտ ակտիվների փոփոխությունների և դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունները, ինչպես նաև ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրությունները, ներառյալ՝ հաշվապահական հաշվառման նշանակալի քաղաքականության ամփոփ նկարագիրը:

Մեր կարծիքով, կից ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով ճշմարիտ են ներկայացնում Հիմնադրամի ֆինանսական վիճակը 2023 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ, ինչպես նաև այդ ամսաթվին ավարտվող տարվա ֆինանսական արդյունքը և դրամական միջոցների հոսքերը՝ համաձայն Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների (ՖՀՄՍ-ներ) :

Կարծիքի հիմք

Աուդիտն անցկացրել ենք Աուդիտի միջազգային ստանդարտներին (ԱՄՍ-ներ) համապատասխան: Այդ ստանդարտներից բխող մեր պատասխանատվությունը լրացուցիչ նկարագրված է այս եզրակացության «Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար» բաժնում: Մենք անկախ ենք Հիմնադրամից՝ համաձայն Հաշվապահների Էթիկայի միջազգային ստանդարտների խորհրդի կողմից հրապարակած Պրոֆեսիոնալ հաշվապահի էթիկայի կանոնագրքի (ՀԷՄՍԽ կանոնագիրք) և պահպանել ենք էթիկայի այլ պահանջները՝ համաձայն ՀՄԷՍԽ կանոնների: Համոզված ենք, որ ձեռք ենք բերել բավարար համապատասխան աուդիտորական ապացույցներ՝ մեր կարծիքն արտահայտելու համար:

Ղեկավարության և կառավարման օղակներում գտնվող անձանց պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների համար

Ղեկավարությունը պատասխանատու է ՖՀՄՍ-ների համաձայն ֆինանսական հաշվետվությունների պատրաստման և ճշմարիտ ներկայացման, և այնպիսի ներքին հսկողության համար, որն ըստ ղեկավարության, անհրաժեշտ է խարդախության կամ սխալի

հետևանքով էական խեղաթյուրումներից զերծ ֆինանսական հաշվետվությունների պատրաստումը ապահովելու համար:

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստելիս՝ ղեկավարությունը պատասխանատու է Հիմնադրամի անընդհատ գործելու կարողության գնահատման համար՝ անհրաժեշտության դեպքում բացահայտելով անընդհատությանը վերաբերող հարցերը, ինչպես նաև հաշվապահական հաշվառման անընդհատության հիմունքը կիրառելու համար, եթե ղեկավարությունը չունի Հիմնադրամը լուծարելու կամ Հիմնադրամի գործունեությունը դադարեցնելու մտադրություն, կամ չունի այդպես չվարվելու որևէ իրատեսական այլընտրանք:

Կառավարման օղակներում գտնվող անձինք պատասխանատու են Հիմնադրամի ֆինանսական հաշվետվողականության գործընթացի վերահսկման համար:

Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար

Մեր նպատակն է ձեռք բերել ողջամիտ հավաստիացում առ այն, որ ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով զերծ են էական խեղաթյուրումներից, անկախ դրանց խարդախության կամ սխալի հետևանքով առաջացման հանգամանքից, և ներկայացնել մեր կարծիքը ներառող աուդիտորի եզրակացություն:

Ողջամիտ հավաստիացումը բարձր մակարդակի հավաստիացում է, բայց այն չի երաշխավորում, որ ԱՄՍ-ներին համապատասխան իրականացված աուդիտը միշտ կհայտնաբերի էական խեղաթյուրումը, երբ այն առկա է: Խեղաթյուրումները կարող են առաջանալ սխալի կամ խարդախության արդյունքում, և համարվում են էական, երբ խելամտորեն կարող է ակնկալվել, որ դրանք, առանձին կամ միասին վերցրած, կազդեն ֆինանսական հաշվետվություններն օգտագործողների՝ այդ ֆինանսական հաշվետվությունների հիման վրա կայացվող տնտեսական որոշումների վրա:

ԱՄՍ-ների համաձայն իրականացրած աուդիտի ողջ ընթացքում կիրառում ենք մասնագիտական դատողություն և պահպանում մասնագիտական կասկածամտություն: Ի լրումն՝

- հատկորոշում և գնահատում ենք խարդախության կամ սխալի հետևանքով ֆինանսական հաշվետվությունների էական խեղաթյուրման ռիսկերը, նախագծում և իրականացնում ենք աուդիտորական ընթացակարգեր՝ այդ ռիսկերին արձագանքելու նպատակով, և ձեռք ենք բերում աուդիտորական ապացույցներ, որոնք բավարար համապատասխան հիմք են հանդիսանում մեր կարծիքի համար: Խարդախության հետևանքով առաջացած էական խեղաթյուրման չհայտնաբերման ռիսկն ավելի բարձր է, քան սխալի հետևանքով էական խեղաթյուրման չհայտնաբերման ռիսկը, քանի որ խարդախությունը կարող է ներառել հանցավոր համաձայնություն, զեղծարարություն, միտումնավոր բացթողումներ, սխալ ներկայացումներ կամ ներքին հսկողության համակարգի չարաշահում.
- ձեռք ենք բերում աուդիտին վերաբերող ներքին հսկողության մասին պատկերացում՝ տվյալ հանգամանքներին համապատասխան աուդիտորական ընթացակարգեր նախագծելու, և ոչ թե Հիմնադրամի ներքին հսկողության արդյունավետության վերաբերյալ կարծիք արտահայտելու համար.
- գնահատում ենք հաշվապահական հաշվառման կիրառված քաղաքականության տեղին լինելը, ինչպես նաև ղեկավարության կողմից կատարած հաշվապահական հաշվառման գնահատումների և կից բացահայտումների խելամտությունը.

- եզրահանգում ենք ղեկավարության կողմից հաշվապահական հաշվառման անընդհատության հիմունքի կիրառման տեղին լինելու վերաբերյալ, և հիմնվելով ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա՝ գնահատում ենք՝ արդյոք առկա է էական անորոշություն դեպքերի կամ իրավիճակների վերաբերյալ, որոնք կարող են նշանակալի կասկած հարուցել Հիմնադրամի անընդհատ գործելու կարողության վրա: Եթե մենք եզրահանգում ենք, որ առկա է էական անորոշություն, ապա մեզանից պահանջվում է աուդիտորի եզրակացությունում ուշադրություն հրավիրել ֆինանսական հաշվետվությունների համապատասխան բացահայտումներին, կամ, եթե այդպիսի բացահայտումները բավարար չեն, ձևափոխել մեր կարծիքը: Մեր եզրահանգումները հիմնված են մինչև մեր եզրակացության ամսաթիվը ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա: Սակայն, ապագա դեպքերը կամ իրավիճակները կարող են ստիպել Հիմնադրամին դադարեցնել անընդհատության հիմունքի կիրառումը.
- գնահատում ենք ֆինանսական հաշվետվությունների ընդհանուր ներկայացումը, կառուցվածքը և բովանդակությունը, ներառյալ՝ բացահայտումները, ինչպես նաև ֆինանսական հաշվետվությունների հիմքում ընկած գործարքների ու դեպքերի ճշմարիտ ներկայացումը:

Կառավարման օղակներում գտնվող անձանց, ի թիվս այլ հարցերի, հաղորդակցում ենք աուդիտի առաջադրանքի պլանավորված շրջանակի և ժամկետների, ինչպես նաև աուդիտի ընթացքում հայտնաբերված նշանակալի հարցերի, ներառյալ՝ ներքին հսկողությանը վերաբերող նշանակալի թերությունների մասին:

Հաստատված է
«Ջի ընդ Քո. Աուդիտ Գրուպ» ՍՊԸ

Տնօրեն Լ.Պողոսյան

Աուդիտոր Ա.Չատինյան

Երևան
19 հունիսի 2024թ.

Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն
«Ինովացիոն կենտրոն» հիմնադրամ
2023թ.դեկտեմբերի 31-ի դրությամբ

ԱԿՏԻՎՆԵՐ	Ծանոթագրություններ	31/12/2023 դ 000	31/12/2022 դ 000
Ոչ ընթացիկ ակտիվներ			
Հիմնական միջոցներ	3	*894*	*965*
Ոչ նյութական ակտիվներ	4	*1,146*	*1,314*
Հետաձգված հարկային ակտիվներ	10	*773*	*624*
Ընդամենը ոչ ընթացիկ ակտիվներ		***2,813***	***2,903***
Ընթացիկ ակտիվներ			
Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր	5	*7,289*	*4,990*
Հարկերի և պարտադիր վճարների գծով գերավճարներ		-	*520*
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	6	*1,204*	*4,863*
Ընդամենը ընթացիկ ակտիվներ		***8,493***	***10,373***
Ընդամենը ակտիվներ		**11,306**	**13,276**
ԶՈՒՏ ԱԿՏԻՎՆԵՐ ԵՎ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ			
Զուտ ակտիվներ			
Կուտակված հավելաճ (չծածկված վնաս)		*(14,377)*	*22*
Ընդամենը զուտ ակտիվներ		**(14,377)**	**22**
Ոչ ընթացիկ պարտավորություններ			
Ընդամենը ոչ ընթացիկ պարտավորություններ		-	-
Ընթացիկ պարտավորություններ			
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր	7	*24,663*	*13,254*
Շահութահարկի գծով պարտավորություն		*1,020*	-
Ընդամենը ընթացիկ պարտավորություններ		***25,683***	***13,254***
Ընդամենը զուտ ակտիվներ և պարտավորություններ		**11,306**	**13,276**

10-ից 21-րդ էջերում ներկայացված ծանոթագրությունները կազմում են սույն ֆինանսական հաշվետվությունների անբաժանելի մասը:

Տնօրեն
Մարի Բաբայեղյան

«Այ Թի Ռիփորթս» ՍՊԸ
տնօրեն
Դավիթ Նիկողոսյան

Համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվություն
«Ինովացիոն կենտրոն» հիմնադրամ
2023թ դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար

	Ծանոթագրություններ	2023 դրամ 000	2022 դրամ 000
Դասընթացների կազմակերպումից հասույթ		*46,408*	*82,108*
Եկամուտներ շնորհներից		-	*1,234*
Այլ եկամուտներ		*1,156*	*20*
Ընդամենը եկամուտներ		47,564	83,362
Մատուցված ծառայությունների ինքնարժեք	8	(46,413)	(67,476)
Շնորհների գծով ծախսեր		-	(1,234)
Վարչական և ընդհանուր այլ ծախսեր	9	(15,733)	(18,082)
Արտարժույթի փոխարժեքային տարբերություններից զուտ վնաս		34	(2,044)
Ընդամենը ծախսեր		(62,112)	(88,836)
Տարվա արդյունք մինչև հարկումը		(14,548)	(5,474)
Շահութահարկի գծով ծախս	10	149	298
Տարվա արդյունք հարկումից հետո		(14,399)	(5,176)
Այլ համապարփակ ֆինանասական արդյունք			
Տարվա ընդհանուր համապարփակ ֆինանսական արդյունք		(14,399)	(5,176)

10-ից 21-րդ էջերում ներկայացված ծանոթագրությունները կազմում են սույն ֆինանսական հաշվետվությունների անբաժանելի մասը:

Տնօրեն
Մարի Բարսեղյան

«Այ Թի Ռիփորթս» ՍՊԸ
տնօրեն
Դավիթ Նիկողոսյան

Զուտ ակտիվների փոփոխությունների մասին հաշվետվություն
«Ինովացիոն կենտրոն» հիմնադրամ
2023թ դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար

դ 000

	Կուտակված հավելաճ (չծածկված վնաս)	Ընդամենը
Մնացորդը առ 31 դեկտեմբերի 2021թ.	**5,198**	**5,198**
Տարվա ֆինանսական արդյունք	(5,176)	(5,176)
Մնացորդը առ 31 դեկտեմբերի 2022թ.	**22**	**22**
Տարվա ֆինանսական արդյունք	(14,399)	(14,399)
Մնացորդը առ 31 դեկտեմբերի 2023թ.	**(14,377)**	**(14,377)**

10-ից 21-րդ էջերում ներկայացված ծանոթագրությունները կազմում են սույն ֆինանսական հաշվետվությունների անբաժանելի մասը:

Տնօրեն
Մարի Բարսեղյան

«Այ Թի Ռիփորթս» ՍՊԸ
տնօրեն
Դավիթ Նիկողոսյան

Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվություն
«Ինովացիոն կենտրոն» հիմնադրամ
2023թ դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար

	01.01.2023-31.12.2023	01.01.2022-31.12.2022
	₹ 000	₹ 000
Դրամական միջոցների հոսքեր գործառնական գործունեությունից		
Հաճախորդներից ստացված դրամական միջոցներ	46,166	65,253
Վճարումներ ծառայությունների և մատակարարումների դիմաց	(8,310)	(21,039)
Վճարումներ քաղիրավական պայմանագրերի գծով	(20,924)	(27,708)
Վճարումներ աշխատակիցներին	(9,820)	(13,869)
Վճարումներ հարկերի և այլ պարտադիր վճարների գծով, այդ թվում՝	(10,233)	(17,013)
- Վճարված շահութահարկ	-	-
Այլ մուտքեր	-	-
Այլ ելքեր	(160)	(715)
Գործառնական գործունեությունից ստացված / գործունեության համար օգտագործված զուտ դրամական միջոցներ	(3,281)	(15,091)
Դրամական միջոցների հոսքեր ներդրումային գործունեությունից		
Վճարումներ ոչ ընթացիկ ակտիվների դիմաց	(413)	(998)
Ներդրումային գործունեությունից ստացված / գործունեության համար օգտագործված զուտ դրամական միջոցներ	(413)	(998)
Դրամական միջոցների և դրանց համարժեքների զուտ աճ/նվազում	(3,694)	(16,089)
Արտաժույթի փոխարժեքային տարբերություններ	35	(1,130)
Դրամական միջոցները և դրանց համարժեքները ժամանակաշրջանի սկզբի դրությամբ	4,863	22,082
Դրամական միջոցները և դրանց համարժեքները ժամանակաշրջանի վերջի դրությամբ	**1,204**	**4,863**

10-ից 21-րդ էջերում ներկայացված ծանոթագրությունները կազմում են սույն ֆինանսական հաշվետվությունների անբաժանելի մասը:

Տնօրեն
Մարի Բարսեղյան

«Այ Թի Ռիփորթս» ՍՊԸ
տնօրեն
Դավիթ Նիկողոսյան

Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ

«Ինովացիոն կենտրոն» հիմնադրամ

2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ և նույն ամսաթվին ավարտված տարվա համար, հազար դրամով

1. Հիմնադրամի գործունեության բնույթը

«Ինովացիոն կենտրոն» հիմնադրամը (այսուհետև՝ Հիմնադրամ) իրավաբանական անձ հանդիսացող ոչ առևտրային կազմակերպություն է:

Հիմնադրամը գրանցվել է Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության իրավաբանական անձանց պետական ռեգիստրի կողմից 2012թ. հունվարի 23-ին՝ որպես «Մայքրոսոֆթ ինովացիոն կենտրոն Հայաստան» հիմնադրամ, որից հետո 2018թ ապրիլի 23-ին կատարել է անվանման փոփոխություն՝ գրանցվելով որպես «Ինովացիոն կենտրոն» հիմնադրամ: Հիմնադրամի պետական գրանցման համարն է 222.160.60972, ՀՎՀՀ-ն՝ 00110858:

Հիմնադրամի ստեղծման և գործունեության հիմնական նպատակն է.

- Աջակցել Հայաստանում նորարարության խթանմանը, որի արդյունքում կմշակվեն ինովացիոն տեղեկատվական և հեռահաղորդակցության տեխնոլոգիաների (ՏՀՏ) լուծումներ՝ մասնավոր, պետական, սոցիալական և այլ ոլորտներում կիրառելու համար,
- Իրականացնել միջոցառումներ, որոնք նպաստում են համապատասխան միջավայրի ձևավորման միջոցով ինովացիոն մշակույթի տարածմանը, նոր գաղափարների բացահայտմանն ու կյանքի կոչմանը,
- Նպաստել ՏՀՏ ոլորտի մասնագետների, գործող և նորաստեղծ կազմակերպությունների տեխնոլոգիական և բիզնես զարգացմանը:

Հիմնադրամն իրավունք ունի զբաղվել նաև ձեռնարկատիրական գործունեության հետևյալ տեսակներով.

- կարճաժամկետ և երկարաժամկետ դասընթացների կազմակերպում,
- միջազգային որակավորման քննությունների անցկացում,
- մրցույթների կազմակերպում,
- խորհրդատվության և տեխնիկական աջակցության տրամադրում,
- գրասենյակային տարածքի տրամադրում այլ կազմակերպությունների:

Հիմնադրամի իրավաբանական և գրասենյակի հասցեն է՝

- ՀՀ, ք. Երևան, Կենտրոն, Տերյան 105, 10-րդ մասնաշենք, 6-րդ հարկ:

Հիմնադրամի հիմնադիրն է ՀՀ քաղաքացի Եվա Հյուսյանը:

Հիմնադրամի կառավարման բարձրագույն և հսկողություն իրականացնող մարմինը հոգաբարձուների խորհուրդն է: Հիմնադրամի հոգաբարձուների խորհուրդը բաղկացած է հետևյալ անդամներից

- Արմեն Բալդրյան (հոգաբարձուների խորհրդի նախագահ) – «Յունիքոմփ» ՓԲԸ տնօրեն
- Ժենյա Ազիզյան - «Ձեռնարկությունների ինկուբատոր» հիմնադրամի ծրագրի ղեկավար
- Հայկ Ֆարմազյան – «Զի-Էն-Սի-Ալֆա» ՓԲԸ տնօրեն
- Մանուկ Հերգնյան – «Ի-Վի Քոնսալթինք» ՓԲԸ տնօրեն
- Արամ Սալաթյան - «Ինժեներական ասոցիացիայի» խորհրդի նախագահ

Հիմնադրամի աշխատակիցների միջին թվաքանակը ինչպես 2023, այնպես էլ 2022թ-ին կազմել է 6 անձ:

Գործարար միջավայր

ՀՀ տնտեսության կայունությունը և զարգացումը մեծապես կախված է Հայաստանում իրականացվող քաղաքական և տնտեսական փոփոխություններից, ինչպես նաև հարկային և օրենսդրական այլ համակարգերի զարգացումից:

Հայաստանում իրականացվող քաղաքական և տնտեսական փոփոխությունները, ինչպես նաև իրավական, հարկային և օրենսդրական համակարգերի զարգացումը շարունակական բնույթ են կրում: Հայաստանի տնտեսության կայունությունը և զարգացումը մեծապես կախված է այս փոփոխություններից, և քանի որ, Հիմնադրամը իր գործունեությունն իրականացնում է Հայաստանում, վերոնշյալ փոփոխություններն ազդեցություն են ունենում Հիմնադրամի վրա:

Իրավական, հարկային և օրենսդրական համակարգերը շարունակում են զարգանալ, սակայն կարող են ունենալ տարբեր մեկնաբանություններ և ենթակա են հաճախակի փոփոխությունների, ինչը, այլ իրավական և ֆինանսական խոչընդոտների հետ մեկտեղ, լրացուցիչ բարդություններ է ստեղծում Հայաստանում գործող կազմակերպությունների համար: Բացի այդ, 2020թ. սեպտեմբերին Լեռնային Ղարաբաղում Ադրբեջանական ագրեսիայի արդյունքում բռնկված զինված հակամարտությունը, որին հաջորդեց հրադադարի մասին համաձայնագիրը Լեռնային Ղարաբաղի վիճելի տարածքների շուրջ, հանգեցրեց սոցիալական հուզումների Հայաստանում: Չնայած հրադադարի մասին համաձայնագրի, Հայաստանի և Ադրբեջանի զինված ուժերը ներքաշվեցին սահմանային բախման մեջ, ինչն իր հերթին մեծացրեց անորոշությունը գործարար միջավայրում: 2023թ. սեպտեմբերին Ադրբեջանի ռազմական ուժերը սկսեցին նոր ռազմական գործողություն, որի հետևանքով Լեռնային Ղարաբաղի բնակչությունը ստիպված էր լքել իր բնակավայրը և տեղափոխվել Հայաստան՝ Ադրբեջանին թողնելով հսկողությունը տարածքի նկատմամբ:

2022թ. փետրվարին Ռուսաստանի Դաշնության և Ուկրաինայի միջև բռնկված ռազմական հակամարտության պատճառով մի շարք երկրներ պատժամիջոցներ սահմանեցին Ռուսաստանի Դաշնության դեմ: Հակամարտությունն ազդեցություն ունի ոչ միայն երկու երկրների տնտեսական գործունեության, այլև՝ համաշխարհային տնտեսության վրա: Պատժամիջոցների արդյունքում աշխարհի շատ երկրներում հումքային և պարենային ապրանքների գներն աճել են, խախտվել են ռեսուրսների մատակարարման հաստատված կապերը, դիտվում է գնաճի ազդեցություն գների վրա, և վերլուծաբանները կանխատեսում են նաև տնտեսական հետևանքներ համաշխարհային արդյունաբերության համար:

Ֆինանսական հաշվետվություններն արտացոլում են Հիմնադրամի գործունեության և ֆինանսական վիճակի վրա Հայաստանի գործարար միջավայրի ազդեցության ղեկավարության գնահատականը, այնուամենայնիվ՝ ապագա տնտեսական,քաղաքական իրավիճակը և վերջիններիս ազդեցությունը Հիմնադրամի գործունեության վրա կարող են տարբերվել Հիմնադրամի ղեկավարության ներկա սպասումներից:

2. Հիմնադրամի հաշվապահական հաշվառման քաղաքականության և գնահատումների համառոտ ամփոփում

2.1. Համապատասխանությունը

Հաշվապահական հաշվառումը վարվել է Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջներին համապատասխան: Ֆինանսական հաշվետվությունները կազմվել են համաձայն ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների (ՖՀՄՍ-ներ):

Ներկայումս ՖՀՄՍ-ները չեն պարունակում հաշվապահական հաշվառման վարման և ֆինանսական հաշվետվությունների ներկայացման վերաբերյալ հատուկ ուղեցույցներ շահույթ չհետապնդող և ոչ կառավարական կազմակերպությունների համար: Եթե ՖՀՄՍ-ն չի տալիս ուղղություն շահույթ չհետապնդող ոլորտի կազմակերպություններին հատուկ գործարքների

հաշվառման վերաբերյալ, ապա հաշվապահական հաշվառման համակարգը պետք է հիմնվի ՖՀՄՍ ընդհանուր սկզբունքների հիման վրա՝համաձայն Հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտների խորհրդի (ՀՀՄՍԽ) «Ֆինանսական հաշվետվությունների պատրաստման և ներկայացման հայեցակարգային հիմունքների»

2.2. Չափման հիմքը

Ակտիվներն ու պարտավորությունները ներկայացված են սկզբնական (պատմական) կամ ամորտիզացվող արժեքով:

2.3. Չափման և ներկայացման արժույթը

Հիմնադրամի համար որպես չափման և ֆինանսական հաշվետվությունների ներկայացման արժույթ ընդունվել է ազգային արժույթը՝ ՀՀ դրամ (դրամ): Ֆինանսական տեղեկատվությունը ներկայացված է դրամով՝ հազարների ճշտությամբ:

2.4. Անընդհատությունը

Ներկայացվող ֆինանսական հաշվետվությունները կազմվել են ելնելով անընդհատության հիմունքից, որը ենթադրում է ակտիվների իրացում և պարտավորությունների մարում բնականոն գործունեության ընթացքում:

2.5. Համադրելիությունը

Ընթացիկ ֆինանսական տարվա տվյալները համեմատելի են նախորդ ժամանակաշրջանի համար ներկայացված տվյալների հետ:

2.6. Ֆինանսական ակտիվներ

Ֆինանսական ակտիվները դասակարգվում են ստորև նշված կատեգորիաներում՝ ըստ ֆինանսական ակտիվների ձեռքբերման նպատակի: Հիմնադրամը չունի որպես «մինչև մարման ժամկետը պահվող» դասակարգված ֆինանսական ակտիվներ: Ստորև ներկայացված է Հիմնադրամի հաշվապահական հաշվառման քաղաքականությունը հաշվեկշռի ամսաթվին առկա յուրաքանչյուր կատեգորիայի համար, բացառությամբ հեջավորման պահանջներին համապատասխանող ֆինանսական ակտիվների:

<u>Դեբիտորական պարտքեր</u>

Դեբիտորական պարտքերը ֆիքսված կամ որոշելի վճարումներով ոչ ածանցյալ ֆինանսական ակտիվներ են, որոնք գնանշված չեն ակտիվ շուկայում: Դրանք առաջանում են ծառայությունների մատուցման արդյունքում (օրինակ՝ առևտրային դեբիտորական պարտքեր: Այդպիսի ֆինանսական ակտիվները սկզբնապես ճանաչվում են իրական արժեքով՝ գումարած գործարքի ծախսերը, իսկ հետագայում չափվում են ամորտիզացված արժեքով՝ օգտագործելով արդյունավետ տոկոսի մեթոդը՝ հանած արժեզրկման պահուստը:

Արժեզրկման պահուստը ճանաչվում է, երբ առկա է անկողմնակալ վկայություն (օրինակ՝ կողմերն ունեն զգալի ֆինանսական դժվարություններ, չեն կատարում ստանձնած պարտավորությունները կամ ուշացնում են վճարումները) առ այն, որ դեբիտորական պարտքը սահմանված ժամկետներում հնարավոր չի լինի ամբողջությամբ հավաքագրել: Նման պահուստի գումարն ակտիվի զուտ հաշվեկշռային արժեքի և արժեզրկված պարտքերի գծով ապագա դրամական միջոցների հոսքերի ներկա արժեքի տարբերությունն է: Զուտ առևտրային դեբիտորական պարտքերի համար նման պահուստները հաշվառվում են առանձին, և վնասը ճանաչվում է Համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում՝ որպես

այլ գործառնական ծախս: Եթե հաստատվում է, որ առևտրային դեբիտորական պարտքն անհավաքագրելի է, ակտիվի համախառն հաշվեկշռային արժեքը դուրս է գրվում ասոցիացված պահուստից:

Դրամական միջոցները և դրանց համարժեքներ

Դրամական միջոցները և դրանց համարժեքները ներառում են ՀՀ դրամով և արտարժույթով դրամական միջոցները բանկում :

2.7. Վարձակալված ակտիվներ

Վարձակալությունը դասակարգվում է որպես ֆինանսական վարձակալություն, երբ վարձակալության պայմաններով սեփականության հետ կապված ըստ էության բոլոր ռիսկերն ու օգուտներն փոխանցվում են վարձակալին: Մյուս բոլոր վարձակալությունները դասակարգվում են որպես գործառնական վարձակալություն:

Գործառնական վարձակալությունից եկամուտը գծային հիմունքով ճանաչվում է համապատասխան վարձակալության ժամկետում:

Գործառնական վարձակալության վճարումները գծային հիմունքով ճանաչվում են որպես ծախս վարձակալության ժամկետում, բացառությամբ,

- երբ մեկ այլ պարբերական հիմունք ավելի լավ է ներկայացնում վարձակալված ակտիվի տնտեսական օգուտների ստացման ժամանակային գրաֆիկը նույնիսկ եթե վճարումները չեն կատարվում այդ հիմունքով, կամ
- վարձատուին հասանելիք վարձավճարները այնպես են որոշված, որ աճեն ակնկալվող ընդհանուր սղաճին զուգընթաց (հիմնված հրապարակված ինդեքսների կամ վիճակագրական տվյալների վրա)՝ վարձատուի կողմից ակնկալվող սղաճի հետևանքով ծախսումների աճը փոխհատուցելու համար:

Գործառնական վարձակալության ներքո առաջացող պայմանական վարձավճարները ճանաչվում են որպես ծախս այն ժամանակաշրջանում, երբ դրանք առաջանում են:

2.8. Հիմնական միջոցներ

Հիմնական միջոցները գնահատվել են սկզբնական (ձեռք բերման, կառուցման) արժեքով՝ հանած կուտակված մաշվածությունը և արժեզրկումից կորուստները:

Սկզբնական արժեքը ներառում է հիմնական միջոցների ձեռքբերմանն ուղղակիորեն վերագրելի ծախսումները:

Մաշվածությունը հաշվարկվում է ակտիվի սկզբնական արժեքի հիման վրա՝ հանած դրա մնացորդային արժեքը: Առանձին ակտիվների էական բաղկացուցիչները գնահատվում են, և եթե բաղկացուցչի օգտակար ծառայության ժամկետը տարբերվում է ակտիվի մնացած մասերի օգտակար ծառայության ժամկետից, ապա այդ բաղկացուցչի մաշվածությունը հաշվարկվում է առանձին: Մաշվածությունը ճանաչվում է համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում արժենվազեցման գծային մեթոդով՝ առանձին ակտիվների օգտակար ծառայության ժամկետների ընթացքում: Մաշվածությունը սկսվում է հաշվարկվել այն պահից, երբ ակտիվը մատչելի է դառնում օգտագործման համար :

Հիմնական միջոցների համար սահմանվել են հետևյալ օգտակար ծառայության ժամկետները՝

	Օգտակար ծառայության ժամկետ (տարի)
Համակարգչային տեխնիկա	1-8
Տնտեսական գույք	1-8

Մաշվածության հաշվարկի մեթոդները, օգտակար ծառայության ժամկետները և մնացորդային արժեքները վերանայվում են յուրաքանչյուր ֆինանսական տարվա վերջում և անհրաժեշտության դեպքում՝ ճշգրտվում:

2.9. Ոչ նյութական ակտիվներ

Ոչ նյութական ակտիվները գնահատվել են սկզբնական /ձեռք բերման, ներստեղծման/ արժեքով՝ հանած կուտակված ամորտիզացիան և արժեզրկումից կորուստները:

Ոչ նյութական ակտիվների ամորտիզացիան հաշվեգրվել է գծային արժենվազեցման մեթոդով՝ հետևյալ օգտակար ծառայության ծամկետով.

Ոչ նյութական ակտիվի տեսակը	Օգտակար ծառայության ժամկետ (տարի)
Համակարգչային ծրագրեր	20
Ծրագրային ապահովման լիցենզիաներ և արտոնագրեր	1-10
Ինտերնետային կայք	20

2.10. Եկամուտներ և ծախսեր, շնորհներ

Եկամուտները և ծախսերը հաշվառվել են հաշվեգրման հիմունքով, այսինքն՝ նրանք համարվել են եկամուտ կամ ծախս դրանց տեղի ունենալու պահին անկախ դրանց հետ կապված դրամական միջոցների վճարման կամ ստացման ժամկետից:

Ծառայությունների մատուցումից հասույթը գոյանում է տեղեկատվական և բարձր տեխնոլոգիաների ոլորտում դասընթացների և միջոցառումների կազմակերպումից ու խորհրդատվական ծառայություններից և ճանաչվում է ծառայությունների մատուցման պահին՝ ըստ նրանց ավարտվածության աստիճանի:

Ստացված շնորհները, նախքան եկամտի (հասույթի) ճանաչման չափանիշները բավարարելը, ճանաչվում են որպես պարտավորություն:

Շնորհը, որը Հիմնադրամի համար չի սահմանում որոշակի ապագա պայմանների կատարում, ճանաչվում է եկամտում, երբ շնորհի գծով մուտքերը ստացման ենթակա են, իսկ այն շնորհը, որը սահմանում է որոշակի ապագա պայմանների կատարում, ճանաչվում է եկամտում միայն, երբ պայմանների կատարումը բավարարվում է:

Ակտիվներին վերաբերող շնորհը նվազեցվում են ակտիվի հաշվեկշռային արժեքը հաշվարկելիս: Շնորհը արտացոլվում է շահույթում կամ վնասում մաշվող (ամորտիզացվող) ակտիվի օգտակար ծառայության ընթացքում՝ նվազեցված մաշվածության ծախսի ձևով:

Շնորհը, որը ստացման ենթակա է դառնում ի հատուցում արդեն կրած ծախսերի կամ վնասների, կամ որի նպատակն է Հիմնադրամին տրամադրել անհետաձգելի ֆինանսական օգնություն՝ առանց դրա հետ կապված հետագա ծախսումների, ճանաչվում են շահույթում կամ վնասում այն հաշվետու ժամանակաշրջանում, երբ այն դառնում է ստացման ենթակա:

2.11. Արտարժույթով գործարքներ և մնացորդներ

Արտարժույթով գործարքները սկզբնական ճանաչման պահին գրանցվել են հաշվետվական արժույթով (դրամ) գործարքի օրվա դրությամբ փոխանակման փոխարժեքով, այսինքն՝ ՀՀ կենտրոնական բանկի կողմից սահմանված հաշվարկային փոխարժեքով:

Հաշվապահական հաշվեկշռի ամսաթվին՝

- արտարժույթով արտահայտված դրամային հոդվածները ներկայացվել (վերահաշվարկվել) են փակման փոխարժեքով,

- արտարժույթով արտահայտված ոչ դրամային հոդվածները ներկայացվել են գործարքի օրվա փոխանակման փոխարժեքով:

Արտարժույթի փոխարկման հետևանքով առաջացած տարբերությունները ճանաչվել են եկամուտ կամ ծախս համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում: Առաջացած շահույթը և վնասը ներկայացվում են զուտ հիմունքով՝ համապարփակ ֆինանասական արդյունքների մասին հաշվետվության մեջ:

Ստորև ներկայացվում են հաշվապահական հաշվեկշռի ամսաթվի դրությամբ փոխանակման (փակման) փոխարժեքները.

Արտարժույթ	31.12.2023	31.12.2022
1 ԱՄՆ դոլար	404.79 ՀՀ դրամ	393.57 ՀՀ դրամ
1 Եվրո	447.90 ՀՀ դրամ	420.06 ՀՀ դրամ

2.12. Աշխատակիցների կարճաժամկետ հատուցումներ

Երբ աշխատակիցը հաշվետու ժամանակաշրջանի ընթացքում Հիմնադրամին մատուցել է ծառայություն, Հիմնադրամը աշխատակիցների կարճաժամկետ հատուցումների չզեղչված գումարը, որոնք ակնկալվում է վճարել այդ ծառայության դիմաց, ճանաչում է

ա) որպես պարտավորություն արդեն վճարված գումարները հանելուց հետո: Եթե արդեն վճարված գումարը գերազանցում է հատուցումների չզեղչված գումարը, Ընկերությունը ճանաչում է այդ տարբերությունը որպես ակտիվ այն չափով, որով կանխավճարը կհանգեցնի, օրինակ, ապագա վճարումների կրճատման կամ դրամական միջոցների վերադարձի, և

բ) որպես ծախս, բացառությամբ այն դեպքերի, երբ ՖՀՄՍ-ներով պահանջվում կամ թույլատրվում է հատուցումների գումարը ներառել մեկ այլ ակտիվի արժեքի մեջ (օրինակ, պաշարների, հիմնական միջոցների դեպքում):

Հիմնադրամը փոխհատուցելի բացակայությունների ձևով աշխատակիցների հատուցումների ակնկալվող ծախսումները ճանաչում է

ա) կուտակվող փոխհատուցելի բացակայությունների դեպքում (օրինակ տարեկան արձակուրդը) այն ժամանակ, երբ աշխատակիցները ծառայություն են մատուցում, որն ավելացնում է իրենց իրավունքները ապագա փոխհատուցելի բացակայությունների նկատմամբ, և

բ) չկուտակվող փոխհատուցելի բացակայությունների դեպքում (օրինակ՝ ժամանակավոր անաշխատունակությունը) այն ժամանակ, երբ բացակայությունը տեղի է ունենում:

Հիմնադրամը կուտակվող փոխհատուցելի բացակայությունների գծով ակնկալվող ծախսումները չափում է որպես լրացուցիչ գումար, որը Հիմնադրամը ակնկալում է վճարել որպես հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ կուտակված չօգտագործված իրավունքների արդյունք:

2.13. Շահութահարկ

Շահութահարկը բաղկացած է ընթացիկ և հետաձգված հարկերից: Ընթացիկ հարկը տարվա շահութահարկի գծով ակնկալվող վճարման ենթակա հարկի գումարն է, որը հաշվարկվում է կիրառելով հարկերի այն դրույքները, որոնք ուժի մեջ են եղել կամ ըստ էության ուժի մեջ են եղել հաշվետու ամսաթվի դրությաբ և ներառում է նախորդ տարիների վճարման ենթակա հարկերի գծով կատարված ճշգրտումները: Հետաձգված հարկերը հաշվարկվում են օգտագործելով հաշվեկշռային պարտավորության մեթոդը՝ հիմնվելով ֆինանսական հաշվետվությունների նպատակների համար օգտագործվող ակտիվների և պարտավորությունների հաշվեկշռային արժեքների և հարկային նպատակների համար օգտագործվող գումարների ժամանակավոր տարբերությունների վրա: Հետաձգված հարկի գումարը չափվում է՝ կիրառելով հարկերի այն դրույքները, որոնք ակնկալվում է, որ կկիրառվեն ժամանակավոր տարբերությունների նկատմամբ վերջիններս հակադարձելիս՝ հիմք ընդունելով

այն օրենքների դրույթները, որոնք ուժի մեջ են եղել կամ ըստ էության ուժի մեջ են եղել հաշվետու ամսաթվի դրությամբ:

Հետաձգված հարկային ակտիվները և հետաձգված հարկային պարտավորությունները հաշվանցվում են, եթե Հիմնադրամն ունի ընթացիկ հարկային ակտիվներն ընթացիկ հարկային պարտավորությունների դիմաց հաշվանցելու իրավաբանորեն ամրագրված իրավունք և հետաձգված հարկային ակտիվներն ու հետաձգված հարկային պարտավորությունները վերաբերում են շահութահարկին, որը գանձվում է նույն հարկային մարմնի կողմից նույն հարկատուից կամ տարբեր հարկատուներից, սակայն ընկերությունը մտադիր է հարկային պարտավորությունները մարել և հարկային ակտիվներն իրացնել զուտ հիմունքով կամ միաժամանակ իրացնել հարկային ակտիվներն ու մարել հարկային պարտավորությունները:

Հետաձգված հարկային ակտիվը ճանաչվում է չօգտագործված հարկային վնասների, հարկային արտոնությունների և նվազեցվող ժամանակավոր տարբերությունների գծով, այն չափով, որքանով հավանական է, որ առկա կլինի հարկվող շահույթ, որի դիմաց դրանք կարող են օգտագործվել: Հետաձգված հարկային ակտիվները վերանայվում են յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ և նվազեցվում են այնքանով, որքանով հավանական չէ, որ հարկային օգուտը կիրացվի:

3. Հիմնական միջոցներ

	Համակարգչային տեխնիկա	Տնտեսական գույք	Ընդամենը
Սկզբնական արժեք			
Առ 01.01.2023թ.	**77,709**	**41,777**	**119,486**
Գնում	103	273	375
Օտարում	-	-	-
Առ 31.12. 2023թ.	**77,812**	**42,050**	**119,862**
Մաշվածություն			
Առ 01.01.2023թ.	**(77,482)**	**(41,040)**	**(118,522)**
Հաշվարկ	(133)	(313)	(446)
Օտարում	-		-
Առ 31.12.2023թ.	**(77,615)**	**(41,353)**	**(118,968)**
Հաշվեկշռային արժեք			
Առ 31.12.2022թ.	**228**	**737**	**965**
Առ 31.12.2023թ.	**197**	**697**	**894**

Հիմնական միջոցների մաշվածության ծախսը ըստ տարիների ներառվել է հետևյալ ծախսային հոդվածներում.

	2023	2022
Շնորհների գծով ծախսեր	0	1,234
Մատուցված ծառայությունների ինքնարժեք	335	562
Վարչական և ընդհանուր ծախսեր	111	0
Ընդամենը	**446**	**2,452**

Հաշվետու ամսաթվի դրությամբ Հիմնադրամն ունի 117,287 հազար դրամ սկզբնական արժեքով հիմնական միջոցներ, որոնց հաշվեկշռային արժեքը զրո է (նախորդ տարվա վերջի դրությամբ՝ 117,243 հազար դրամ):

4. Ոչ նյութական ակտիվներ

	Համակարգչային ծրագրեր	Լիցենզիաներ, ինտերնետային կայք	Ընդամենը
Սկզբնական արժեք			
Առ 01.01.2023թ.	250	6,677	6,927
Գնում	-	100	100
Օտարում	-	-	-
Առ 31.12. 2023թ.	250	6,777	7,027
Ամորտիզացիա			
Առ 01.01.2023թ.	(200)	(5,413)	(5,613)
Հաշվարկ	(11)	(257)	(268)
Օտարում	-	-	-
Առ 31.12.2023թ.	(211)	(5,670)	(5,881)
Հաշվեկշռային արժեք			
Առ 31.12.2022թ.	450	1,264	1,314
Առ 31.12.2023թ.	39	1,107	1,146

5. Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր

	31.12.2023	31.12.2022
Դեբիտորական պարտքեր մատուցված ծառայությունների գծով	9,450	6,661
Դեբիտորական պարտքերի հնարավոր կորուստների պահուստ	(2,184)	(1,676)
Տրված ընթացիկ կանխավճարներ	23	5
Այլ	0	0
Ընդամենը	**7,289**	**4,990**

6. Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ

	31.12.2023	31.12.2022
Բանկային հաշիվներ ՀՀ դրամով	1,204	1,358
Բանկային հաշիվներ արտարժույթով	0	3,505
Ընդամենը	**1,204**	**4,863**

7. Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր

	31.12.2023	31.12.2022
Կրեդիտորական պարտքեր քաղիրավական պայմանագրերի և աշխատավարձի գծով	12,418	3,197
Ստացված ընթացիկ կանխավճարներ	9,358	7,964
Պարտքեր աշխատակիցների կուտակած արձակուրդային վճարների գծով	2,112	1,793
Առևտրային կրեդիտորական պարտքեր	775	300
Ընդամենը	**24,663**	**13,254**

8. Մատուցված ծառայությունների ինքնարժեք

	- 2023 -	- 2022 -
Քաղիրավական ծառայությունների գծով ծախսեր	35,334	40,636
Հատուցումներ աշխատակիցներին	8,913	11,783
Նյութերի և ծառայությունների ձեռք բերման ծախսեր	1,563	14,309
Մաշվածության և ամորտիզացիայի ծախսեր	603	748
Ընդամենը	**46,413**	**67,476**

9. Վարչական և ընդհանուր այլ ծախսեր

	- 2023 -	- 2022 -
Վարչական աշխատակիցների հատուցումներ	7,406	6,173
Գրասենյակային և կոմունալ ծախսեր	3,220	2,727
Աուդիտորական և խորհրդատվական ծախսեր	3,110	4,822
Ստացված ապրանքներ և ծառայություններ	894	1,058
Դեբիտորական պարտքերի հնարավոր կորուստների պահուստի գծով ծախսեր	509	1,676
Մաշվածության և ամորտիզացիայի ծախսեր	111	-
Չփոխհատուցվող հարկեր	84	177
Այլ	399	1,450
Ընդամենը	**15,733**	**18,082**

10. Շահութահարկ և հետաձգված հարկեր

10.1. Շահութահարկի գծով ծախս

	- 2023 -	- 2022 -
Ընթացիկ հարկի գծով ծախս	-	-
Հետաձգված հարկի գծով եկամուտ	149	298
Շահութահարկի գծով ընդհանուր ծախս (եկամուտ) համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում	**149**	**298**

2023 և 2022 թվականների շահութահարկը հաշվարկելիս ՀՀ օրենսդրությանը համապատասխան կիրառվել է 18% դրույքաչափը:

10.2. Հետաձգված հարկ

	31.12.2023		
	Հաշվեկշռային արժեք	Հարկային բազա	Նվազեցվող ժամանակվոր տարբերություն
Աշխատակիցների կուտակված արձակուրդային վճարների գծով	2,112	0	2,112
Դեբիտորական պարտքերի պահուստի գծով	2,184	0	2,184
Ընդամենը			**4,296**
Հարկի դրույքը			**18%**
Հետաձգված հարկային ակտիվ			**773**

	31.12.2022		
	Հաշվեկշռային արժեք	Հարկային բազա	Նվազեցվող ժամանակվոր տարբերություն
Աշխատակիցների կուտակված արձակուրդային վճարների գծով	1,793	0	1,793
Դեբիտորական պարտքերի պահուստի գծով	1,676	0	1,676
Ընդամենը			**3,469**
Հարկի դրույքը			**18%**
Հետաձգված հարկային ակտիվ			**624**

Հետաձգված հարկերի հաշվարկման ժամանակ ինչպես 2023, այնպես էլ 2022 թվականին կիրառվել է շահութահարկի 18% դրույքաչափը:

11. Կապակցված կողմերի հետ գործարքներ

- *Առանցքային կառավարչական անձնակազմի վարձատրություն*

Հիմնադրամի առանցքային կառավարչական անձնակազմում ներառված է հիմնադրամի տնօրենը, որի համար հաշվարկված աշխատավարձը և դրան հավասարեցված վճարումները ներառյալ հարկերը կազմել են՝

	- 2023 -	- 2022 -
Հաշվարկված աշխատավարձ և դրան հավասարեցված վճարումներ	1,128	1,129

	31.12.2023	31.12.2022
Չօգտագործված արձակուրդայինի գծով պարտավորություն	181	91

Կապակցված կողմերի հետ այլ գործարքներ և մնացորդներ չկան:

12. Ֆինանսական ռիսկերի կառավարում

Ֆինանսական ռիսկերի կառավարումն Հիմնադրամի համար ունի կարևոր նշանակություն: Դրանք հիմնականում կապված են պարտքային, իրացվելիության և արտարժույթի ռիսկերի հետ:

12.1. Պարտքային ռիսկ

Պարտքային ռիսկը ֆինանսական վնաս կրելու ռիսկն է, երբ պայմանագրային մյուս կողմն ի վիճակի չի լինում կատարելու իր պարտավորությունները, որի հետևանքով Կազմակերպությունը կարող է ֆինանսական կորուստներ կրել: Հիմնադրամի հիմնական պարտքային ռիսկն առաջանում է ուսման վարձերի հավաքագրելիության գծով:

Ակնկալվող պարտքային կորուստները չափելիս առևտրային դեբիտորական պարտքերը գնահատվել են հավաքական հիմունքով, քանի որ դրանք ունեն պարտքային ռիսկի ընդհանուր բնորոշումներ: Առևտրային դեբիտորական պարտքերի գծով ակնկալվող պարտքային կորուստների մեծությունը հաշվետու ամսաթվի դրությամբ գնահատվել է 2,184 հազար դրամ, որի գծով ձևակերպվել է անհավաքագրելիության պահուստ:

12.2. Շուկայական ռիսկ

Ֆինանսական գործիքների օգտագործման ընթացքում Հիմնադրամը ենթարկվում է շուկայական ռիսկի, հատկապես՝ արտարժութային ռիսկի:

ա) Արտարժութային ռիսկը

Արտարժույթի ռիսկն առաջանում է, երբ արտարժույթով արտահայտված ակտիվները ավելի կամ պակաս են նույն արժույթով արտահայտված պարտավորություններից: Հիմնադրամի արտարժութային ռիսկը երբեմն առաջանում է արտարժույթով դրամական միջոցներից: Հաշվետու ամսաթվի դրությամբ հիմնադրամը արտարժութային ակտիվներ և պարտավորություններ չունի:

բ) Տոկոսադրույքի ռիսկը

Հիմնադրամը տոկոսադրույքային ռիսկեր չունի:

12.3. Իրացվելիության ռիսկ

Իրացվելիության ռիսկը պարտավորությունները մարելու նպատակով համապատասխան դրամական միջոցների սակավության կամ բացակայության ռիսկն է: Իրացվելիության ռիսկի կառավարման նպատակն է ցանկացած պահի ապահովել բոլոր անհրաժեշտ միջոցները, որոնք թույլ կտան մարելու դրամական հոսքերի հետ կապված պարտավորությունները:

Հիմնադրամը իրացվելիության ռիսկի գնահատման և կառավարման ժամանակ հաշվի է առնում ֆինանսական ակտիվներից ակնկալվող դրամային հոսքերը:

Ստորև ներկայացված է Հիմնադրամի ակտիվների ընթացիկ իրացվելիության վերլուծությունը

	31.12.2023	31.12.2022
Ընթացիկ ակտիվներ	8,493	10,372
Ընթացիկ պարտավորություններ	25,682	13,254
Ընթացիկ իրացվելիության գործակից	0.3	0.8
Դրամական միջոցներ և համարժեքներ	1,204	4,863
Ընթացիկ պարտավորություններ	25,682	13,254
Բացարձակ իրացվելիության գործակից	0.0	0.4

* Արագ իրացվելի ակտիվների կազմում ներառվում են Ընկերության բոլոր ընթացիկ ակտիվները՝ բացառությամբ պաշարների:

13. Պայմանական պարտավորություններ

Ֆինանսական երաշխիքներ և ակրեդիտիվներ

Հիմնադրամը 31.12.2023 և 31.12.2022 ամսաթվերի դրությամբ ֆինանսական երաշխիքներ և ակրեդիտիվներ չի ունեցել:

Ապահովագրություն

Հայաստանի Հանրապետությունում ապահովագրական համակարգը զարգացման փուլում է, և ապահովագրության շատ տեսակներ, որոնք լայնորեն տարածված են մյուս երկրներում, դեռ չեն կիրառվում Հայաստանում: Հիմնադրամի գույքը ապահովագրված չէ: Այն ապահովագրված չէ գործունեության ընդհատման և երրորդ կողմերի նկատմամբ պարտավորությունների հանդեպ, որոնք կարող են առաջանալ գույքին կամ շրջակա միջավայրին վնաս հասցնելուց առաջացած Հիմնադրամի տարածքում տեղի ունեցած պատահարներից կամ նրա գործունեությունից հասցված վնասից: Քանի դեռ Հիմնադրամը համապատասխան ձևով ապահովագրված չէ, գոյություն ունի ռիսկ, որ որոշակի ակտիվների կորուստը կամ ոչնչացումը կարող է անբարենպաստ էական ազդեցություն ունենալ Հիմնադրամի գործունեության և ֆինանսական վիճակի վրա:

Իրավական պարտավորություններ

Հիմնադրամի ղեկավարությունը տեղյակ չէ Հիմնադրամի դեմ հարուցված որևէ փաստացի, անավարտ կամ սպառնացող էական հայցերի մասին:

Պայմանական հարկային պարտավորություններ

Հայաստանի Հանրապետությունում հարկային համակարգը համեմատաբար նոր է և հատկանշական է հաճախակի փոփոխվող օրենսդրությամբ: Վերջինս հաճախ հստակ չէ, հակասական է և պահանջում է մեկնաբանություններ: Շատ դեպքերում այս կամ այն հարցում տարբեր հարկային և այլ իրավասու մարմիններ ունեն տարբեր մեկնաբանություններ: Հարկային խնդիրներն ուսումնասիրվում են հարկային մարմինների կողմից, որոնք օրենսդրությամբ լիազորված են հաշվարկել տուգանքներ և տույժեր:

Այս փաստերը Հայաստանի Հանրապետությունում կարող են այլ երկրների համեմատությամբ էական հարկային ռիսկ առաջացնել: Ղեկավարությունը գտնում է, որ Հիմնադրամը չունի լրացուցիչ հարկային պարտավորություններ և պահուստ չի ձևավորել լրացուցիչ հարկային պարտավորությունների գծով:

14. Հաշվետու ժամանակաշրջանից հետո տեղի ունեցող դեպքեր

Հաշվետու ամսաթվից հետո մինչև վավերացման ամսաթիվը ընկած ժամանակահատվածում ճշգրտող դեպքեր կամ էական չճշգրտող դեպքեր տեղի չեն ունեցել:

15. Ֆինանսական հաշվետվությունների հաստատում

Սույն ֆինանսական հաշվետվությունները հաստատվել և ստորագրվել են 2024թ հունիսի 19-ին:

Տնօրեն
Էդգար Բարսեղյան

«Այ Թի Ռիփորթս» ՍՊԸ
տնօրեն
Դավիթ Նիկողոսյան

Signer: ՀՀ ՊԵԿ
Date: 28.06.2024 17:35